

**ՄԻԳՐԱՑԻՈՆ ՈՒՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Անկախացումից ի վեր՝ արտագաղթի կասեցումն ու ներգաղթի խրախուսումը դարձել է Հայաստանի Հանրապետության կառավարության գերակա խնդիրներից մեկը:

1988 թվականի Սպիտակի երկրաշարժով, ԽՍՀՄ-ի փլուզմամբ, Արցախյան պատերազմով և էներգետիկ շրջափակմամբ պայմանավորված անցումային փուլում ստեղծված քաղաքական, սոցիալ-տնտեսական և, ինչու ոչ, բարոյահոգեբանական ծանր իրավիճակը խթան հանդիսացավ Հայաստանից բնակչության արտագաղթի համար: Ըստ տարբեր վիճակագրական տվյալների՝ 1988-2001 թթ. Հայաստանի Հանրապետությունից արտագաղթել է մոտավոր հաշվարկներով 800 հազարից մինչև 1,1 միլիոն մարդ¹, ընդ որում, բեկումնային տարիները 1992-1994 թթ. էին, որի ընթացքում, ինչպես նշում է ՀՀ Միգրացոն պետական ծառայության պետ Գ. Եգանյանը, ՀՀ-ն լքել է ավելի քան 610 հազար մարդ²: Միաժամանակ մեծ էր Ադրբեջանից բռնագաղթված հայերի ներհոսքը: Քայքայված տնտեսության պայմաններում անհրաժեշտ էր քայլեր ձեռնարկել մի կողմից վերջիններիս ապաստանով ապահովելու, բազմաձևազար միգրանտների ու

¹ Միգրացիան և գաղթացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն, Երևան, 2009, էջ 2, Գալստյան Մ. Վ., Աշխատանքային միգրացիան հետխորհրդային Հայաստանի գյուղական բնակչության շրջանում. «Լրաբեր հասարակական գիտությունների», 2011, № 1-2, էջ 164. ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրություն և դրա կանխարգելման նպատակով արտաբնակչությունների ներկայացում, էջ 4 ([http:// www.mta. gov. am /hy/news/item/2011/09/06/news_1018/](http://www.mta.gov.am/hy/news/item/2011/09/06/news_1018/)):

² <http://henaran.am/17243.html>, այցը՝ 20.03.2016:

բոնագաղթվածների սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու, մյուս կողմից արտագաղթը կառավարելի և վերահսկելի դարձնելու մեխանիզմներ մշակելու ուղղությամբ: Դրա անհրաժեշտության մասին է վկայում նախ Փախստականների հարցերով պետական վարչության ստեղծումը, ապա վերջինի առաջարկը Միգրացիայի պետական ծառայություն ստեղծելու մասին, որի նախագիծը ՀՀ նախագահին և կառավարությանը ներկայացվել է 1990-ականների սկզբներին: Ինչպես նշված է ՀՀ փախստականների հարցերի պետական վարչության 1993 թ. հունիսի 29-ի դիմում-ուղերձում, հանրապետությունում բացակայում էր այնպիսի մարմինը, որը պետական մակարդակով կգրադվեր բնակչության միգրացիայի համակարգման, կառավարման և վերահսկման հարցերով, որը տարերային բնույթ էր կրում, չկային միգրացիայի կարգավորման մասին օրենսդրական ակտեր և դրանց համապատասխան մեխանիզմներ³:

Արցախյան պատերազմի ավարտից (1994 թ.) հետո՝ մինչև 2008 թ., երկրի տնտեսությունը սկսեց փոքր-ինչ բարելավվել, իսկ արտահոսքը կրճատվեց շուրջ 3,5 անգամ⁴: 2002-2007 թթ. հանդիսացան երկնիշ տնտեսական աճի տարիներ, սակայն 2009 թ. ճգնաժամը հանգեցրեց 14,1 % տնտեսական անկման⁵, որը չէր կարող անհետևանք մնալ:

Էմիգրացիան, որոշ առումով, կարելի է դիտարկել որպես երկիրը կաթվածահար վիճակից դուրս բերելու միջոց: Արտագաղթողների մեծ մասը, հատկապես 1994 թ. հետո, եղել են աշխատանքային միգրանտները, որոնց կողմից փոխանցված դրա-

³ ՀԱԱ, ֆ. 1176, ց. 1, գ. 18, թ. 2:

⁴ Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ, Երևան, 2010, էջ 6 (<http://mtrcarm.com/law.html>):

⁵ Թրոյսյան Գ., «Վերախնտեզրացիա. հին երևույթ, նոր մոտեցումներ», Երևան, 2014, էջ 8, 9 (Գծապատկեր 1):

մակայն միջոցները օգնել են հաղթահարել ինչպես 1990-ականներին տիրող, այնպես էլ 2009 թ. հետճգնաժամային իրադրությունը Հայաստանում: 2006 թ. պաշտոնական հաշվարկներով, հայ միգրանտների՝ հայրենիք ուղարկած դրամական միջոցները գերազանցել են 1 միլիարդ դոլարը, որը կազմում էր երկրի ՆԱ-ի 19 %-ը⁶:

Այնուամենայնիվ, մտավախություն կա, որ էթե համապատասխան քայլեր չձեռնարկվեն, և, ավելին, չլինի պետական միջամտություն միգրացիայի պատճառները վերացնելու և միգրացիայի գործընթացին կարգավորված բնույթ հաղորդելու ուղղությամբ, հնարավոր է բնակչության արտահոսքի ընդլայնում: Միգրացիան մի կողմից օգնում է հաղթահարել անցումային շրջանի սոցիալ-տնտեսական ճգնաժամը և դրաից եկամուտներ ապահովել, մյուս կողմից՝ նպաստում է «ուղեղների արտահոսքին», բնակչության ժողովրդագրական, սոցիալական պատկերի փոփոխությանն ու սահմանային գոտիների դատարկմանը, ինչը բարենպաստ չէ, նախ և առաջ, ազգային անվտանգության տեսանկյունից:

Այս ուղղությամբ կարևոր քայլ էր ՀՀ նախագահի 2009 թ. նոյեմբերի 18-ի հրամանագրով⁷ Տարածքային կառավարման նախարարության կազմում Միգրացիոն պետական ծառայություն ստեղծելու որոշումը, որը, որպես պետական մարմին, կոչված էր զբաղվելու Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական քաղաքականության մշակմամբ և իրականացմամբ: Որպես պետական պատասխանատու մարմին, այն ստեղծվեց համակարգելու միգրացիայի կարգավորման գործառույթներ

⁶ Միգրացիան և զարգացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն, Երևան, 2009, էջ 8:

⁷ http://www.smsmta.am/?menu_id=68.

իրականացնող այլ գերատեսչությունների աշխատանքը, համագործակցելու համապատասխան նախարարությունների, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների հետ ինչպես քաղաքականության մշակման, այնպես էլ նրա իրականացման հարցում⁶:

Միգրացիոն խնդիրների հաղթահարման տեսանկյունից Հայաստանի համար օժանդակիչ նշանակություն է ունեցել միգրացիայի կարգավորման բնագավառի առաջատար կազմակերպություններից մեկի՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) հայաստանյան առաքելության գործունեությունը, որի իրար փոխլրացնող և տրամախաչվող ծրագրերն ուղղված են Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտի բարելավմանը, անօրինական միգրացիայի կանխարգելմանը, օրինական և պատշաճ միգրացիայի՝ երկրի զարգացմանն ուղղելուն, միգրանտների կամավոր վերադարձի և վերաինտեգրմանը նպաստելուն:

Հայաստանի Հանրապետությունը ՄՄԿ-ին անդամակցել է 1993 թ. և նույն թվականին էլ Երևանում հիմնադրվել է ՄՄԿ ներկայացուցչության գրասենյակը: Արդեն 1997 և 1998 թթ. Երևանում ու Գյումրիում հաջորդաբար բացվեցին Փոքր բիզնեսի զարգացման ծրագրի գրասենյակներ: Հետագայում Երևանում բացվեց նաև Միգրացիոն ռեսուրս կենտրոն (2006 թ. սեպտեմբե-

⁶ ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Տարածքային կառավարման նախարարության «Միգրացիոն պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին, 17 դեկտեմբերի 2009 թ., N 1515-Ն, էջ 2-3 (www.gov.am):

րին)⁹: 1996 թ. ՀՀ կառավարության և ՄՄԿ-ի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ ՄՄԿ-ն Հայաստանում վարել է «Միգրացիայի բնագավառում կադրային բազայի ամրապնդման» ծրագիր: Վերջինիս նպատակն էր հանրապետության տարբեր նախարարությունների աշխատակիցներից միգրացիայի ոլորտի հմուտ մասնագետներ պատրաստել: Այս մասնագետներով համալրված աշխատանքային խմբի կողմից էլ մշակվել է «ՀՀ միգրացիայի պետական քաղաքականության հայեցակարգ» փաստաթուղթը: Նույն պայմանագրով նախատեսված էր ՄՄԿ-ի օժանդակությունը ՀՀ կառավարությանը՝ միգրացիայի բնագավառի կարգավորման և, մասնավորապես, միգրացիայի միասնական տեղեկատվական համակարգի գործարկման հարցում¹⁰:

ՄՄԿ գործունեության անկյունաքարերից է փախստականների և միգրանտների **կամավոր վերադարձի աջակցումն ու վերաինտեգրումը (ԿՎԱՎ)**: Այս հարցում կազմակերպությունը սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՓԳՀ) և ընդունող ու ծագման երկրների կառավարությունների հետ: 1994 թ. ի վեր ՄՄԿ-ն աջակցություն է ցուցաբերել բազմահազար միգրանտների, ովքեր չկարողանալով ապրել դրսում, վերադարձել են Հայաստան¹¹:

Ինչպես ցույց են տալիս ՄՄԿ փորձագետների գնահատումները՝ մինչև 2010 թ. ՀՀ որևէ քաղաքական փաստաթուղթ չի արտացոլել վերադարձի և վերաինտեգրման հարցերը, քանի որ ամբողջ ուշադրությունը կենտրոնացվել է հատկապես արտա-

⁹ http://mac.iom.int/armenia/about/iom_in_am.htm.

¹⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 194, գ. 235, թ. 11:

¹¹ Տասնհինգ տարի Հայաստանում. միգրացիայի կառավարում ի բարօրություն բոլորի, Երևան, 2008, էջ 24-25:

գաղթի խնդրի վրա: Միայն 2011 թ. ՀՀ կառավարությունն ընդունեց «Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի 2012-2016 թթ. գործողությունների ծրագիրը», որի 14 գերակայություններից մեկը վերաբերում է ՀՀ քաղաքացիների վերադարձի և վերաինտեգրման աջակցմանը¹²: 2013 թ. ստորագրվեց նաև հետընդունման համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև, որը կարգավորում և դյուրինացնում է անօրինական միգրանտների վերադարձի, դրա հետ կապված ծախսերի, փաստաթղթերի, անհատական տվյալների պաշտպանության և մի շարք այլ ընթացակարգեր, ինչպես նաև թույլ տալիս ժամանակ խնայել¹³:

Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով ԵՄ հարևանության գոտում և ունենալով համեմատաբար հեշտացված վիզային ռեժիմ, կարող է վերածվել անօրինական միգրացիայի ծագման և տարանցիկ երկրի: Ինչպես ցույց է տվել ՄՄԿ-ի կողմից «ՀՀ-ում անկանոն միգրացիայի վերաբերյալ ելակետային հետազոտություն»-ը՝ Հայաստանում օտարազգիների իմիգրացիան ավելի հազվադեպ հանդիպող երևույթ է, բայց կան անկանոն կարգավիճակով միգրանտներ, որոնք գալիս են հատկապես աֆրիկյան և ասիական երկրներից, փորձում են ցանկացած տեսակի կացության կարգավիճակ ստանալ Հայաստանի Հանրապետությունում՝ օգտվելով երկրի համեմատաբար ազատական միգրացիոն համակարգից: Իսկ նրանց վերջնական

¹² Հայաստանում միգրանտների վերաինտեգրման վրա ներազդող առողջապահական գործոնների գնահատում, Երևան, 2014, էջ 13:

¹³ Հայաստանում ռեադմիսիոն գործերի վարույթը: Ուղեցույց և ուսուցողական նյութեր հետընդունման գործընթացում ներառված պետական մարմինների պաշտոնյաների համար, Երևան, 2014, էջ 8-9:

նպատակն իրականում Արևմուտք գաղթելն է¹⁴։ Ուստի՝ չափազանց կարևոր է միգրացիայի լիարժեք կառավարումն ու վերահսկումը, քանի որ Հայաստանի Հանրապետության համար, որը մի կողմից ստորագրել է Վիզաների դյուրացման և մյուս կողմից Հետընդունման մասին համաձայնագիր Եվրամիության հետ, դժվար կլինի հոգ տանել, օրինակ, եվրոպական երկրներից հետ ուղարկվող անօրինական միգրանտների մասին։

1997 թ. սկսած ՄՄԿ-ն Հայաստանում իրականացնում է **«Ինքնաբավություն և ինտեգրում փոքր ձեռնարկությունների զարգացման միջոցով»** ծրագիրը, որը միկրովարկեր է առաջարկում տարբեր կատեգորիայի միգրանտներին՝ վերադարձած միգրանտներ, փախստականներ, տեղահանված անձիք և պատերազմից տուժածներ։ Բացի վարկերից՝ այդ անձիք վերապատրաստվում են բիզնեսի կառավարման, աշխատանքային հմտությունների զարգացման ուղղությամբ։ ՄՄԿ-ն այս կերպ նպաստում է նրանց վերաինտեգրմանն ու ինքնաբավությանը՝ նվազեցնելով փախստականների և միգրանտների կախվածությունը մարդասիրական օգնությունից¹⁵։

Որպես աջակցություն ՀՀ կառավարությանը՝ շահագրգիռ կազմակերպությունների հետ համագործակցությամբ ՄՄԿ-ն աջակցել է **միգրացիոն տվյալների** հավաքման, փոխանակման և վերլուծության մեթոդաբանության մշակմանը¹⁶։ Բանն այն է, որ ըստ ՄՄԿ փորձագետների՝ Հայաստանի Հանրապետությունում հավաքագրվում է միգրացիոն տվյալների զգալի քանակություն, որի մեծ մասը համակարգչավորված է, սակայն բավարար ջան-

¹⁴ Հայաստանի Հանրապետությունում անկանոն միգրացիայի վերաբերյալ էլակենտային հետազոտություն, Երևան, 2013, էջ 12-14։

¹⁵ <http://www.un.am/hy/agency/IOM> (Միգրանտների ինտեգրում և վերապատրաստում)։

¹⁶ <http://www.un.am/hy/agency/IOM> (Միգրացիոն տվյալներ)։

քեր չեն գործադրվում այդ տվյալները համադրելու և ամբողջական վիճակագրական տեղեկատվություն մշակելու համար: Հաճախ տեղեկատվական նոր բազաներն ու հարթակները ստեղծվում են միմյանցից անջատ, ինչը խոչընդոտում է կոնկրետ միգրանտի վերաբերյալ «միասնական վարչական գործ» կազմելուն, որը կներառի միգրացիոն բոլորաշրջանը՝ սկսած երկիր մուտք գործելուց մինչև մեկնելու պահը: Միասնական բազաներն ու ռեգիստրները, համեմատած ավանդական մարդահամարների և հետազոտությունների հետ, շատ ավելի կոնկրետ և համապարփակ ձևով կարող են ներկայացնել բնակչության տեղաշարժի բնույթն ու դառնալ հզոր գործիք պետության համար՝ կատարելու համեմատական վերլուծություններ ինչպես տարբեր ժամանակահատվածների, այնպես էլ երկրների կտրվածքով, կատարել կանխատեսումներ և ապագայի սցենարներ¹⁷:

ՄՄԿ-ն շարունակաբար աջակցել է ՀՀ Կառավարությանը՝ սահմանների կառավարման բարեփոխումների իրականացման գործում և այստեղ հատկանշական է Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԷԿՏ) ներդրումը սահմանային անցման հսկիչ կետերում՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության հետ համագործակցությամբ: 2004 և 2005 թթ. Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում դեռևս 1999 թ. տեղադրված Սահմանների էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի տեխնիկական գնահատումից հետո ՄԷԿՏ համակարգը աստիճանաբար ներդրվեց ՀՀ սահմանային անցման բոլոր հսկիչ կետերում՝ ներառելով Բագրատաշեն, Բավրա, Գոգավան հսկիչ կետերը, Այրումի երկաթու-

¹⁷ Միգրացիայի տվյալների հավաքագրման, մշակման և փոխանակման կատարելագործումը Հայաստանի Հանրապետությունում, կառիքների գնահատում և առկա բացերի վերլուծություն, Երևան, 2011, էջ 9-13:

ղայիկ կայարանը, Մեդրիի ցամաքային սահմանը և Գյումրիի օդանավակայանը¹⁸:

ՄՄԿ-ն տեխնիկական աջակցություն է տրամադրել ևս կենսաչափական կողմնորոշիչներով էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի ներդրման և որակի ստուգման հարցում¹⁹:

Ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանն ունի մեծաթիվ **աշխատանքային միգրանտներ**, վերջիններիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը և նրանց անօրինական շահագործումը կանխելը պետք է մշտապես լինեն պետական լիազոր մարմինների գործունեության օրակարգում: Այս բնագավառում ՄՄԿ-ն ուղղակի և անուղղակի աջակցություն և խորհրդատվություն է տրամադրում ՀՀ Կառավարությանը, նրա տարբեր գերատեսչություններին և բնակչությանը: Անկանոն միգրացիայի վտանգների և օրինական միգրացիայի օգուտների մասին հանրությանն իրազեկելու նպատակով ՄՄԿ-ն 2006 թ. Երևանում հիմնել է Միգրացիոն ռեսուրս կենտրոն, որը գործում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության ներքո: Հետագայում այս մոդելի հիման վրա միգրացիոն ռեսուրս կենտրոններ (ՄՌԿ) ստեղծվեցին Հայաստանի այլ վայրերում²⁰:

2012 թ. Հայաստանը մաս է կազմել մի տարածաշրջանային ծրագրի, որի նպատակն էր ապահովել Եվրոպայում բնակվող բարձր մասնագիտական որակավորում ունեցող հայրենակիցների ժամանակավոր վերադարձը Հայաստան փորձի փոխա-

¹⁸ Տասնհինգ տարի Հայաստանում միգրացիայի կառավարում ի բարօրություն բոլորի, էջ 10-11:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ <http://www.un.am/hy/agency/IOM> (Միգրանտների խորհրդատվություն):

նակման նպատակով: Եվրոպայում բնակվող մեր հայրենակիցները, որոնք ունեին բարձր որակավորում գիտության և մշակույթի տարբեր բնագավառներում, ծրագրի շրջանակներում հնարավորություն են ստացել ժամանակավորապես աշխատելու ՀՀ պետական ու մասնավոր տարբեր հիմնարկներում՝ մեկ շաբաթից մինչև վեց ամիս տևողությամբ: Մասնակցելու համար սփյուռքահայ ներկայացուցիչը պետք է տիրապետեր հայերենին և հանդիսանար ԵՄ անդամ պետության քաղաքացի: Սակայն ծրագրին մասնակցելու հնարավորություն են ունեցել ոչ միայն բուն սփյուռքահայերը, այլ նաև անձիք, ովքեր համեմատաբար վերջերս են տեղափոխվել Եվրոպա և ունեն այնտեղի քաղաքացիություն կամ մշտական կացություն²¹: ՄՄԿ-ի հայաստանյան առաքելության աշխատակիցների հաղորդմամբ՝ մինչ 2016 թ. ծրագիրը նպաստել է շուրջ 35 մասնագետի ժամանակավոր վերադարձին: Արդյունավետության տեսանկյունից՝ սա լավագույն փորձերից մեկն է՝ Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդման և վերջինիս ներուժը Հայաստանի զարգացման մեջ ներդնելու տեսակետից և կարող է ծառայել որպես մոդել՝ նմանատիպ նախաձեռնությունների համար:

Այսպիսով, հաշվի առնելով հետխորհրդային շրջանում Հայաստանի Հանրապետության առջև ծառայած խնդիրները, միգրացիան դարձավ այն ոլորտներից մեկը, որն ուներ անհապաղ կարգավորման և պետական աջակցության կարիք: Այդ նպատակով կարևոր էր միջազգային համագործակցությունն ու

²¹ Info Sheet TRQN III Armenia (http://www.iom-nederland.nl/en/component/docman/cat_view/11-migratie-en-ontwikkeling?orderby=dmdate_published&ascdesc=DESC), <http://niederlandakan.livejournal.com/110291.html>.

լավագույն փորձի փոխանակումը, որում հատկանշական է Հայաստանի անդամակցությունը Միգրացիայի միջազգային կազմակերպությանը, որի հայաստանյան առաքելության գործունեությունը կարևոր նպաստ է բերել մեզանում միգրացիոն ոլորտի կարգավորմանը: Այդպիսին են Կամավոր վերադարձի և վերաինտեգրման, փոքր ձեռնարկությունների զարգացման միջոցով միգրանտների ինքնաբավության և ինտեգրման ծրագրերը, հայկական Սփյուռքի հետ մասնագիտական որակավորում ունեցող հայրենակիցների ժամանակավոր վերադարձի ծրագրերը, պայքարը թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի դեմ, սահմանների և ինքնության կառավարման, միգրացիոն տվյալների հավաքագրման, միգրանտների իրավունքների պաշտպանության և այլ հարցերում ՀՀ կառավարությանը, քաղաքացիական հասարակությանն ու անմիջապես բնակչությանը տրամադրվող տեխնիկական, հետազոտական և խորհրդատվական աջակցությունը:

ВАЛЯ МАРТИРОСЯН

**ПРОБЛЕМЫ МИГРАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И
ДЕЯТЕЛЬНОСТЬ МЕЖДУНАРОДНОЙ ОРГАНИЗАЦИИ
ПО МИГРАЦИИ**

РЕЗЮМЕ

Принимая во внимание многочисленные трудности, с которыми Республика Армения сталкивалась во времена постсоветского периода, миграция стала одной из тех проблем, которая требовала немедленного реагирования и поддержку со стороны государства. По разным данным, от 800 000 до 1,1 миллиона человек эмигрировали из Республики Армения в период с 1988 по 2001 года.

В борьбе с миграцией РА поддержку оказала одна из ведущих мировых организаций в регулировании миграции – Международная организация по миграции (МОМ). Взаимодополняющие и взаимосвязанные программы МОМ направлены на улучшение системы управления миграцией, предотвращение незаконной миграции, развитие правовой и упорядоченной миграции, добровольное возвращение и реинтеграцию мигрантов.

VALYA MARTIROSYAN

MIGRATION-RELATED ISSUES IN THE REPUBLIC OF
ARMENIA AND THE ACTIVITIES OF INTERNATIONAL
ORGANIZATION FOR MIGRATION

SUMMARY

Considering the numerous problems the Republic of Armenia started to face during post-Soviet time, the migration became one of those spheres that required immediate response and state support. According to different data analysis about 800 to 1.1 million people have emigrated from the Republic of Armenia between 1988 and 2001, the breakthrough years being 1992-1994 of Karabakh war.

In terms of overcoming migration related issues, the RA mission of the International Organization for Migration (IOM) as one of the world leading organizations in regulating migration, has been of great support to Armenia. IOM's complementary and interrelated programs aim at improving migration management, preventing illegal migration, directing legal and orderly migration to the development of the country, facilitating the voluntary return and reintegration of migrants.